

**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Վարդան ԲՈՍԱՆՁՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հայկ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ
ՀՊԵՀ հայցորդ

Բանալի բառեր. բնական մենաշնորհ, տնտեսական մրցակցություն,
հակամենաշնորհային քաղաքականություն, հանրային ծառայություններ

Ժամանակակից տնտեսության արդյունավետ կենսագործունեության կարևոր նախապայմաններից մեկն է հանդիսանում մրցակցային շուկան, որի դերն անժխտելի է տնտեսական հարաբերությունների բնականոն զարգացման գործում: Հայտնի է, որ ազատ մրցակցության վրա հիմնված շուկայական համակարգը նպաստում է ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխմանը և արտադրության արդյունավետության բարձրացմանը: Սակայն արտաքին ազդակների գոյության, հասարակական բարիքների յուրահատկության և մի շարք այլ գործոնների պատճառով կատարյալ մրցակցությունը չի հանդիսանում շուկայի բնական վիճակ: Մասնավորապես, մի շարք ոլորտների տեխնոլոգիական առանձնահատկությունների պատճառով արդյունավետ և քիչ ծախսատար արտադրություն կարելի է ապահովել միայն բացարձակ և հարաբերական արտահայտությամբ խոշոր արտադրողների արկայության պարագայում: Բացի այդ, այդ ոլորտներում խիստ ցայտուն կերպով է արտահայտված մասշտաբի էֆեկտը, ինչի արդյունքում ծախսերի ավելացումը հանգեցնում է տնտեսումների աճին: Հենց դրանով է պայմանավորված մեկ սուբյեկտի կողմից ամբողջ արտադրության կենտրոնացման անհրաժեշտությունը, որի արդյունքում ձևավորվում են բնական մենաշնորհները: Որպես կանոն, դրանցում մրցակցությունը կամ հնարավոր չէ, կամ էլ ցանկալի չէ՝ հատկապես խոշորածավալ ծախսերի անհրաժեշտության պատճառով: Բնական մենաշնորհների առանձնահատուկ գծերից է ցանցային կառուցվածքների արկայությունը (խողովակաշարեր, ջրամատակարարման համակարգեր, էլեկտրական բաշխիչ ցանցեր, երկաթուղի և այլն), որոնք, խոշոր հաշվով, մատուցում են հանրային բնույթի ծառայություններ: Դրանցում տեղաբաշխվող ակտիվները խիստ յուրահատուկ են իրենց բնույթով, սահմանափակ են կիրառելիության շրջանակներով և չեն կարող վերատեղաբաշխվել այլ շուկաներում: Հանրային ծառայությունների ոլորտի մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք պետք է ունենան լրացուցիչ արտադրական հզորություններ որոշակի, ոչ ստանդարտ իրավիճակներում

աճող պահանջմունքների բավարարման համար, ինչը ևս, իր հերթին, ենթադրում է բարձր կապիտալատարություն:

Հարկ է նշել, որ հանրային ծառայությունների ոլորտում մենաշնորհային վիճակը բնութագրական է արտադրական ամբողջ շղթայի միայն առանձին օղակներին: Մասնավորապես, որպես այդպիսիք պետք է դիտարկել ընկերությունների կողմից շահագործվող երկաթուղային գծերը, այլ ոչ թե շարժակազմը, հեղահաղորդակցության կապուղիները, այլ ոչ թե փոխանցող մեխանիզմները, խողովակաշարերը, և ոչ թե տվյալ գործընթացում օգտագործվող սարքավորումները: Նման առանձնահատկություններով պայմանավորված, մրցակցության հնարավորությունները խիստ սահմանափակվում են ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ տեսակի գործունեության առումով: Այս տեսանկյունից, համակարգի արդյունավետ գործունեության կազմակերպումը ենթադրում է ցանցային ենթակառուցվածքներ մուտքի հնարավորության ապահովում, ինչը կարող է տեղի չունենալ դրանց տիրապետողների կողմից օգտագործման դիմաց բարձր սակագների սահմանման կամ էլ մուտքի սահմանափակման այլ եղանակների կիրառման պատճառով: Ըստ էության, նշված խնդրի լուծման համար գոյություն ունի երկու հիմնական տարբերակ.

1. ցանցային սպասարկման կազմակերպման և վերջնական արդյունքի մատուցման փուլերի տարանջատում,

2. ցանցերից օգտվելու համար գանձվող վճարների նկատմամբ վերահսկողություն: Այս տարբերակը հիմնված է այն բանի վրա, որ հանրային ծառայություններ մատուցող ընկերություններն իրենցից ներկայացնում են ուղղահայաց ինտեգրացված արտադրություններ, ինչի պատճառն ավելի շատ ոչ թե մրցակցության սահմանափակումն է, այլ տրանսակցիոն ծախսերի կրճատման ցանկությունը:

Ընդհանուր առմամբ, հանրային ծառայությունների կարգավորման և բնական մենաշնորհի ոլորտների կողմից սեփական դիրքի չարաշահման կանխարգելման և հասարակության համար ընդունալի վարքագծի ապահովման նպատակով կիրառվում են երկու հիմնական եղանակներ. պետական սեփականություն և մասնավոր ընկերությունների գործունեության պետական կարգավորում: Անդրադառնա՞նք նշվածներից յուրքանջուրին առանձին առանձին:

Հայտնի է, որ կատարյալ մրցակցության պայմաններում օպտիմալ գինը հավասար է սահմանային ծախսերին: Արտադրական ենթակառուցվածքների ոլորտում սահմանային ծախսերը, որպես կանոն, ցածր են միջին համախառն ծախսերից, ինչի արդյունքում օպտիմալ գինը միջին համախառն ծախսերից

փոքր է ստացվում: Նման իրավիճակում պետությունը կարող է պարտադրել ընկերությանը մատուցել ծառայություններ սահմանային ծախսերին հավասար գնով և իրականացնել պետական սուբսիդավորում՝ անխուսափելի կորուստների փոխհատուցման նպատակով: Նման քաղաքականությունը, որպես կանոն, հանգեցնում է մենաշնորհային ոլորտներում պետության լիակատար կամ մասնակի ներգրավման, ինչի արդյունքում ձևավորվում է, այսպես կոչված, «հասարակական մենաշնորհը»: Վերջինիս տնտեսական ակտիվությունը կարգավորվում է շուկայական միջավայրի կողմից, իսկ կառավարման մեխանիզմը մնում է իշխանությունների վերահսկողության ներքո: Այս դեպքում ֆինանսական կորուստները մնում են հարկատուների ուսերին և բեռ դառնում պետական բյուջեի վրա: Հասարակական մենաշնորհի դեպքում պետության ներգրավման հիմնական դրսևորումներ են հանդիսանում ընկերությունների ծախսերի նկատմամբ վերահսկողության սահմանումը, նշված ընկերություններում զբաղվածության, ինչպես նաև եկամուտների և սակագների ուղղակի պետական կարգավորումը և այլն: Ըստ էության, հասարակության կյանքում հանրային ծառայությունների ոլորտի կարևորությամբ և չարաշահումների հավանականությամբ էին պայմանավորված տարբեր երկրներում դրանց ազգայնացման գործընթացները: Մասնավորապես, որոշ երկրներում (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և այլն) ստեղծվեցին պետական կորպորացիաներ, որոնց գործունեությունն ուղղակիորեն կարգավորվում էր պետության կողմից: Սակայն նման քաղաքականությունը շատ դեպքերում չի ապահովում համապատասխան արդյունավետություն և կենսունակ է միայն արտակարգ, մասնավորապես պատերազմական իրավիճակներում: Հակառակ դեպքում պետական կենտրոնացումը հանգեցնում է ձեռնարկատիրական նախաձեռնության արգելակման՝ դրանից բխող հետևանքներով:

Հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման հաջորդ եղանակը մասնավոր ընկերությունների գործունեության պետական կարգավորումն է կամ, այսպես կոչված, մենաշնորհային շուկայի համար մրցակցության ապահովումը: Դա իրականացվում է մրցույթի արդյունքում ընտրված ընկերությանը երկրի տարածքում կամ առանձին տարածաշրջաններում արտադրության բացառիկ իրավունք տրամադրելու միջոցով: Այս եղանակի տեսական հիմքերը կայանում են նրանում, որ մասշտաբից խնայողության էֆեկտի գոյությունը պայմանավորում է մեկ մատակարարի անհրաժեշտություն և այս դեպքում մրցակցությունը պետք է դրսևորվի միայն սկզբնական փուլում՝ որպես այդպիսին դառնալու համար: Միևնույն ժամանակ, այս եղանակի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ են այնպիսի նախապայմաններ, ինչպիսիք են մենաշնորհային ծառայությունների մատակարարման իրավունքին հավակնող մի քանի որակավորված թեկնածուների առկայությունը,

նրանց, ինչպես նաև նրանց և մրցույթն անցկացնող կառույցների միջև պայմանավորվածությունների բացառումը և այլն: Այս դեպքում հաղթողի ընտրության հիմնական չափորոշիչը ծառայությունների մատուցման գինն է: Ընդ որում, պետք է հաշվի առնել այն, որ բնական մենաշնորհի ոլորտներում արտադրության ծախսերը երկարաժամկետ հատվածում ունեն կրճատման միտում և, դրանով պայմանավորված, սակագների վերանայման գործընթացը պետք է կրի պարբերական բնույթ: Միաժամանակ, այս մեթոդը ևս ունի որոշակի թերություններ, որոնցից հիմնականը ծառայությունների մատուցման սակագինը որպես հիմնական չափորոշիչ ընդունելն է, ինչը շատ դեպքերում բացասաբար է անդրադառնում որակի վրա: Դրանով հանդերձ, այս եղանակը բավականաչափ լայն տարածում ունի և գործում է մոտ 37 պետություններում: Որպես կանոն, մրցույթի հաղթողը ձեռք է բերում վարձակալության կամ կոնցեսիոն իրավունքի հիման վրա գործունեություն իրականացնելու հնարավորություն: Առավել լայն տարածում ունի վարձակալությունը որի դեպքում ակտիվները կամ պատկանում են, կամ ստեղծվում են պետության միջոցների հաշվին, իսկ դրանց կառավարումն իրականացվում է մասնավոր ընկերությունների կողմից: Կոնցեսիայի դեպքում մասնավոր ընկերությունները սեփական միջոցների հաշվին իրականացնում են ներդրումներ արտադրական ցանցերի պահպանման և զարգացման նպատակով: Ինչպես ցույց է տալիս տարբեր երկրների փորձը, բնական մենաշնորհի ոլորտների պետական կարգավորումն իրականացվում է երեք հիմնական տարբերակներով: Առաջին, գերիշխող ընկերության նկատմամբ պետական վերահսկողություն է իրականացվում հականենաշնորհային օրենսդրության համաձայն: Մյուս երկու տարբերակներն իրենցից ներկայացնում են տարբեր մոդելներ: Առաջինի հիմնված է շահույթի նորմայի կարգավորման (ծախսերի հաշվառման վրա հիմնված կարգավորում), իսկ երկրորդ՝ սակագնի վերին շեմի կարգավորման (խթանիչ կարգավորում) վրա:

Շահույթի նորմայի կարգավորումն ավանդաբար իրականացվում է ԱՄՆ-ում, որտեղ բնական մենաշնորհի ոլորտներում գործնականում հրաժարվել են սահմանային ծախսերի հիման վրա զնազոյացումից: Այս մեթոդի հիմնական էությունը կայանում է շահույթի նորմայի սահմանափակման մեջ: Ընկերություններին թույլատրվում է ստանալ զուտ շահույթ միայն նախապես հայտնի սահմաններում: Պետությունը սահմանում է ծախսերի սահմանային չափը, որը կոչվում է արդարացի շահույթի ապահովման գին: Այս դեպքում ընկերությունների գործունեության բոլոր ասպեկտները՝ սակագները, ներդրումները և շահութաբերությունը ենթակա են պետական մարմինների կողմից մանրակրկիտ իրավական կարգավորման: Սակագնի սահմանման ժամանակ հաշվի են առնվում ծառայությունների յուրաքանչյուր տեսակի գծով կատարված ծախսերը: Ըստ էության, սակագնի որոշումը կազմված է երեք հիմնա-

կան փուլերից. ընթացիկ ծախսերի, ներդրումների հաշվարկում և ողջամիտ շահույթի որոշում:

Ընթացիկ ծախսերը հաշվարկվում են միասնական մեթոդաբանությամբ, որը պարտադիր է ոլորտում գործող բոլոր ընկերությունների համար: Հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող պետական կառույցը վերահսկողություն է իրականացնում բարձր գներով ապրանքների ձեռքբերման, ուժեղացված աշխատավարձերի վճարման կամ առավել էժան գներով ապրանքների և ծառայությունների մատակարարումներից հրաժարվելու հետեվանքով չհիմնավորված ծախսերի կատարման նկատմամբ:

Ներդրումների գնահատումը կարգավորման այս մոդելի առավել բարդ կողմերից մեկն է, քանի որ կապիտալ ներդրումները կարելի է տարբեր կերպ գնահատել: Գործնականում նախապատվությունը տրվում է ձեռքբերման գներով կապիտալի գնահատմանը, իսկ ամորտիզացիան իրականացվում է կարգավորող կառույցի կողմից հաստատված նորմատիվների հիման վրա: Բացի այդ, հաշվի են առնվում միայն այն ներդրումները, որոնք կարգավորող մարմնի կողմից համարվում են արդարացված:

Թույլատրելի շահույթը որոշվում է փորձագիտական գնահատումների հիման վրա: Դրա ստորին շեմ է հանդիսանում կապիտալի գինը, իսկ վերին շեմ՝ ներդրումներից ստացվող շահույթը գոյություն ունեցող ռիսկերը հաշվի առնելով: Հանրային ծառայությունների կարգավորման այս մոդելը, պետք է նշել, որ իր դրական կողմերով հանդերձ, ունի նաև որոշակի թերություններ: Այս դեպքում կարգավորումը, որպես կանոն, դառնում է ընկերությունների համար շահույթի երաշխավորման և հնարավոր մրցակցությունից պաշտպանության միջոց: Բացի այդ, ընկերությունները շահագրգռվածություն չունեն ընթացիկ ծախսերի զսպման կամ կրճատման համար, այլ ընդհակառակը, ձգտում են դրան, քանի որ ծախսերի աճը, ի վերջո, հանգեցնում է համախառն շահույթի ավելացման:

Հանրային ծառայությունների կարգավորման հաջորդ մոդելը խթանիչ կարգավորումն է, որը լայն տարածում ստացավ 80-ական թվականներին՝ հատկապես Մեծ Բրիտանիայում բնական մենաշնորհի ոլորտում գործող ընկերությունների մասնավորեցման արդյունքում: Դրա հիմնական էությունը կայանում է շահույթի նորմայի խիստ սահմանափակումների բացակայության մեջ: Այս դեպքում միջինժամկետ հատվածում (4-5 տարի) սահմանվում է տարեկան սակագնի հաշվարկման բանաձև, որը հաշվի է առնում դեֆլյատորը, արտադրողականության ցուցանիշը, ինչպես նաև տվյալ ոլորտում մատուցվող ծառայությունների վրա անդրադարձող մի շարք գործոն-

ներ: Արտադրողականության բարձրացման գործոնի հաշվարկն իրականացվում է հեռանկարային պահանջարկի, կապիտալ ներդրումների ծավալի, ծախսերի հնարավոր նվազեցման և արտադրողականության աճի, ինչպես նաև ներդրումների գնահատումների հիման վրա: Պետք է նշել, որ այս մոդելն ունի մի շարք առավելություններ: Մասնավորապես, այս դեպքում կարգավորման հիմքում ընկած է գների մակարդակը: Բացի այդ, թափանցիկությունը և դրա հետևանք հանդիսացվող որոշումների ընդունման գործընթացին հետևելու հնարավորությունը նպաստում են հասարակության կողմից վստահության մակարդակի ձևավորմանը: Կարգավորման այս մոդելը ենթադրում է ավելի պարզ գործընթաց, ինչի արդյունքում ընկերությունն ինքն է վերանայում և փոխում սակագները սահմանված բանաձևին համաձայն խուսափելով կարգավորող մարմնի կողմից սակագնի հաստատման երկարատև ընթացակարգերից: Այս մոդելի հիմնական թերություն է հանդիսանում ներդրումների իրականացման առումով շահագրգռվածության բացակայությունը, քանի որ ընկերությունները շահույթի մակարդակի տատանումներից խուսափելու նպատակով կարող են խուսափել նաև ներդրումներից: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ շահույթը և ներդրումները միմյանց հետ սերտորեն կապված են, իսկ բարձր շահույթի դեպքում կարգավորող մարմնի կողմից սահմանված բանաձևով այն կկրճատվի, ինչի հետևանքով կնվազի նաև ներդրումներ իրականացնելու ցանկությունը:

Այսպիսով, կարող ենք նշել, որ հանրային ծառայությունների կարգավորման այս երկու մոդելներն ունեն որոշակի նմանություններ. երկու դեպքում էլ հիմք է վերցվում ընկերության զարգացման համար բավարար շահույթի որոշումը: Միևնույն ժամանակ, այս երկու մոդելների հիմնական տարբերությունները կայանում են հետևյալում:

1. Սակագնի կարգավորման մոդելի դեպքում ժամկետը ֆիքսված է, իսկ շահութաբերության նորմայի կարգավորման դեպքում ընկերությունը կարող է դիմել սակագնի վերանայման համար օրենսդրությամբ սահմանված հաճախականությամբ:

2. Շահույթի նորմայի ամրագրման մոդելը հիմնվում է նախորդ ժամանակաշրջանների տվյալների վրա, և սակագնի հաշվարկման ժամանակ հիմնականում հաշվի են առնվում կանխատեսումները:

3. Սակագների կարգավորման մոդելը ընկերություններին գործունեության առավել մեծ ճկունություն է ապահովում:

Ամփոփելով, պետք է նշել, որ հանրային ծառայությունների կարգավորման երկու մոդելներն էլ ունեն զգալի բարդություններ ինչպես սակագների վերին սահմանի որոշման, այնպես էլ մատուցվող ծառայությունների որակի վերահսկողության առումով: Այս տեսանկյունից, յուրաքանչյուր երկրում հանրային ծառայությունների ոլորտի պետական կարգավորումը պետք է

բխի առկա սոցիալ-տնտեսական առանձնահատկություններից և տնտեսական կյանքին պետության ունեցած դերակատարությունից:

**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Վարդան ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, Հայկ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ**

Բանալի բառեր. բնական մենաշնորհ, տնտեսական մրցակցություն, հակամենաշնորհային քաղաքականություն, հանրային ծառայություններ

Հոդվածում քննարկված են հանրային ծառայությունների առանձնահատկությունները և դրանց կարգավորման հիմնական եղանակները: Ներկայացված են բնական մենաշնորհի ոլորտում ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշների ձևավորման վրա ազդող գործոնները: Վերլուծության են ենթարկված հանրային ծառայությունների պետական կարգավորման գոյություն ունեցող մոդելները և ներկայացված են դրանցից յուրաքանչյուրի առավելությունները և թերությունները: Ուսումնասիրված են հանրային ծառայությունների սակագների ձևավորման և սահմանման առանձնահատկությունները:

МЕТОДЫ РЕГУЛИРОВАНИЯ ПУБЛИЧНЫХ УСЛУГ И ИХ ОСОБЕННОСТИ

Вардан БОСТАНДЖЯН, Айк БАГДАСАРЯН

Ключевые слова: естественная монополия, экономическая конкуренция, антимонопольная политика, публичные услуги, тарифное регулирование

В статье обсуждены особенности публичных услуг и основные формы их регулирования. Представлены основные факторы, влияющие на финансово-экономические показатели компании в сфере естественных монополий. Анализированы существующие модели государственного регулирования публичных услуг и представлены их недостатки и преимущества. Изучены особенности формирования и определения тарифов публичных услуг.

METHODS OF REGULATION OF PUBLIC SERVICES AND THEIR FEATURES

Vardan BOSTANJYAN, Hayk BAGHDASARYAN

Natural monopoly, economic competitiveness, antimonopoly policy, public services, tariff regulation

The article discusses features of public services and basic forms of their regulation. The main factors influencing the financial and economic indicators of the company in the sphere of natural monopolies have been presented. The article analyzes existing models of state regulation of public services and presents their advantages and disadvantages. Formation and determination of tariffs of public services have been analyzed as well.